

# Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն

Ծրագրի համար՝ 42417-033

Վարկի համար՝ L3293-ARM

Հուլիս-դեկտեմբեր 2024թ

## Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2

Պատրաստված է Երևանի քաղաքապետարանի կողմից

Երևանի քաղաքապետարանի ծրագրերի իրականացման գրասենյակ

Երևան, Հայաստան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
1.1. Նախարան .....	4
1.2. Հիմնական տեղեկություն .....	4
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ .....	10
2.2. Ծրագրի Պայմանագրեր և Կառավարում .....	10
2.3. Ծրագրի գործունեությունը ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում .....	13
2.4. Ծրագրի նախագծի ցանկացած փոփոխության նկարագրություն .....	13
2.5. Համաձայնեցված շինարարական մեթոդների ցանկացած փոփոխության նկարագրություն .....	13
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՀԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	14
3.1. Դաշտային ստուգայցեր/աուդիտներ.....	14
3.2. Խնդիրների վերահսկում (Անհամապատասխանության ծանուցումների հիման վրա) .....	14
3.3. Միտումներ.....	14
3.4. Չնախատեսված բնապահպանական ազդեցություններ ու ռիսկեր .....	14
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	15
4.1. Ընթացիկ ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի ամփոփագիր.....	15
4.2. Միտումներ.....	15
4.3. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում.....	16
4.4. Նյութական ռեսուրսների օգտագործում .....	16
4.4.1. Ընթացիկ ժամանակաշրջան .....	16
4.4.2. Ռեսուրսների ընդհանուր օգտագործում .....	16
4.5. Թափոնների Կառավարում .....	16
4.5.1. Ընթացիկ ժամանակաշրջան.....	16
4.5.2. Կուտակված թափոնների արտադրություն.....	17
4.6. Առողջապահություն և Անվտանգություն .....	17
4.6.1. Հասարակության առողջություն և անվտանգություն .....	17
4.6.2. Աշխատողների անվտանգություն և առողջություն.....	17
5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	24
6. ՏԲԿՊ-Ի ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ .....	33

6.1 ՏԲԿՊ վերանայում .....	33
5. ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓԱՐՁ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	34
7.1 Լավագույն փորձ.....	34
7.2 Կատարելագործման/բարելավման հնարավորություններ .....	34
6. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	35
8.1 Ամփոփում.....	35
8.2 Առաջարկություններ .....	37
7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	38

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱ	Ազդակիր անձ
ԱԱԱ	Առողջապահություն և աշխատանքի անվտանգություն
ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԱՔՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարություն
ԲԱԱ	Բնապահպանություն, առողջություն և աշխատանքի անվտանգություն
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԲՄ	Բնապահպանության մասնագետ
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԵՔ	Երևանի քաղաքապետարան
ԵԿՆ ԾԻԳ	Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համյանքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՕՏԾ	Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀԿ	Հասարական կազմակերպություն
ՇՄԳՎՇ	Շրջակա միջավայրի գնահատման և վերանայման շրջանակ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՆԲԳ	Նախնական բնապահպանական գնահատում
ՎԻ	Վերահսկող ինժեներ
ՏԲԿՊ	Տարածքի բնապահպանական կառավարման պլան
ՔԿԶՆԾ	Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


### 1.1. Նախաբան

1. Բնապահպանական մոնիթորինգի սույն կիսամյակային հաշվետվությունն ընդգրկում է 2024թ. հուլիս-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածը: Այս հաշվետվությունը պատրաստվել է ԵԿՆ ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի կողմից:

### 1.2. Հիմնական տեղեկություն

#### ա. Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարության իրականացման առաջընթաց, Մրցույթ 3

2. Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի բացակայող ճանապարհահատվածներից Արգանանդ-Շիրակ ճանապարհահատվածի (Հատված 1) կառուցման համար Մրցույթ 3՝ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարության պայմանագիրը կնքվել է Երևանի քաղաքապետարանի ու Լեվանտինա Ինխեներիա Կոնստրուկցիոն Սի. Էլ. շինարարական ընկերության միջև 2019թ. հուլիսի 16-ին: Ծրագիրը ներառում է 1.3կմ երկարությամբ, երկկողմանի երթևեկությամբ 6 երթևեկելի գոտիներով նոր քաղաքային ճանապարհի կառուցում՝ արագընթաց ճանապարհի չափանիշների համաձայն, և 1.2 կմ իջատեղեր քաղաքային համատեքստի շրջանակներում, ինչպես նաև Հրազդան գետի վրայով 252մ երկարությամբ նոր կամուրջի կառուցում: Պատկեր 1-1-ում ներկայացված է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի տեղադիրքը: Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2019թ. սեպտեմբերի 6-ին: Ամբողջ աշխարհով մեկ տարածված ՔՈՎԻԴ-19 համավարակի ու ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պատճառով շինարարական բոլոր տեսակի աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել էին 2020թ. մարտի 17-ից մինչև 2020թ. ապրիլի 15-ը: Շինարարական աշխատանքները վերսկսվել են համաձայն ՀՀ Պարետի՝ 2020թ. ապրիլի 12-ի թիվ 37 որոշման և Ինժեների՝ 2020թ. ապրիլի 13-ի թիվ 20-0125 PMLT գրության: Շինարարական աշխատանքները մեկնարկել են ապրիլի 15-ին և ավարտվել են 2022թ. հունիսի 4-ին: Հաշտվետու ժամանակահատվածում Կապալառուին չի տրամադրվել որևէ ժամկետի երկարաձգում: Շինարարությունից հետո Բնապահպանական մոնիթորինգն իրականացվել է Ինժեների կողմից՝ բնապահպանական անհամապատասխանությունները հայտնաբերելու և թերությունների ծանուցման ժամանակահատվածում դրանք լուծելու համար: Որևէ խախտում չի հայտնաբերվել: Թերությունների ծանուցման ժամանակահատվածն ավարտվել է 2024 թվականի հունիսի 30-ին:



Պատկեր 1-1: Մրցույթ 3. Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի տեղադիրքի քարտեզ

**բ. Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարության իրականացման առաջընթաց, Մրցույթ 4**

3. Մրցույթ 4՝ Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքներն ավարտվել են 2018թ. դեկտեմբերի 15-ին: Թերությունների ծանուցման ժամանակահատվածը 365 օր էր և այն ավարտվել է 2019թ. դեկտեմբերի 15-ին (տես՝ Պատկեր 1-2.Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի տեղադիրքը): 2021 թվականի սկզբում ԱԶԲ-ի կողմից ներգրավվել է աղմուկի ուսումնասիրության անհատ խորհրդատու, ով իրականացրել է աղմուկի մոդելավորում/հետազոտություն Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի ամբողջ երկայնքով: Ուսումնասիրության/մոդելավորման արդյունքների հիման վրա ԱԶԲ-ի կողմից առաջարկվել է կառուցել աղմկապաշտպան պատնեշներ՝ ապահովելու համար ծրագրի համապատասխանությունն ԱԶԲ անվտանգության երաշխիքների պահանջներին: ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետը 2021թ. մայիսին վերանայել է առաջարկությունները և հայտնաբերել, որ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ (նոր կառույցներ, նոր մուտքերի բացում և այլն) առաջարկվող աղմուկի խոչընդոտների հատվածներում, ինչը պահանջում է աղմուկի հետազոտության վերանայում՝ համաձայն Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի նոր իրավիճակի և պայմանների: Ուսումնասիրության վերանայումն իրականացվել է 2021թ. օգոստոս-սեպտեմբեր ժամանակահատվածում ԱԶԲ-ի կողմից վարձված աղմուկի փորձագետի կողմից: Հոկտեմբերին շինհրապարակի համատեղ այցելություններ են իրականացվել ԱԶԲ-ի, ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետների և ԱԶԲ-ի կողմից վարձված աղմուկի փորձագետի մասնակցությամբ՝ հասկանալու համար փոփոխությունները, աղմկապաշտպան պատնեշների իրականացման հնարավոր

բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև պատնեշների կառուցման իրագործելիությունը: Հանդիպումներ անցկացվեցին նաև ազդակիր անձանց (ԱԱ) հետ՝ դիտարկելու համար նրանց առաջարկներն ու մտահոգությունները: Բազմաթիվ այցերի ու հանդիպումների արդյունքում ԱԶԲ-ն և ԾԻԳ-ը որոշեցին մեկնարկել շինարարության իրագործելիության ուսումնասիրությունը, որը վերջնական տեսքի է բերվել 2022թ. հունիսի վերջին Տրանս 2-ի ինժեներ՝ ԷԳԻՍ ընկերության կողմից:

4. Երևանի քաղաքապետարանի Ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՔ ԾԻԳ) խնդրանքով Էգիս Ինթերնեյշնլը իրականացրել է տեղամասային հետազոտություններ Դավիթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի վրա՝ աղմկապաշտպան պատնեշների տեղադրման հնարավորության ուսումնասիրության նպատակով: Նախագծային աշխատանքներն իրականացվել են Էգիս Ինթերնեյշնլ ընկերության կողմից, համաձայն որի մոտ 465 մետր երկարությամբ աղմկապաշտպան պատնեշների տեղադրման աշխատանքները մեկնարկել են 2024թ. հունվարին՝ Լևանտինա Ինխեսերիա Կոնստրուկսիոն Ս.Լ. ընկերության կողմից, և ավարտվել են 2024 թ. մարտի 28-ին:



Պատկեր 1-2: Մրցույթ 4. Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի տեղադիրքի քարտեզ

#### գ. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարության իրականացման առաջընթաց, Մրցույթ 5

5. Երևանի քաղաքապետարանը 2017 թվականի դեկտեմբերի 11-ին պայմանագիր է կնքել ՏԻՐՐԵՆԱ ՍԿԱՎԻ Էս.ՓԻ.Էյ (Իտալիա) շինարարական ընկերության հետ՝ Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի (Մրցույթ 5) կառուցման համար: Ճանապարհի ընդհանուր երկարությունը 9.4 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 24 մետր (տես պատկեր 1-3՝ Բաբաջանյան-Աշտարակ խճուղու տեղադիրքը): Շինարարության համար տրամադրված նախնական տևողությունը 24 ամիս էր:

Մրցույթ 5 - Բաբաջանյան-Աշխատակ խճուղու շինարարական աշխատանքների մասնակի մեկնարկը՝ կմ-2+300-ից կմ 6+300, տրվել է 2018թ. փետրվարի 1-ին: Երևանի քաղաքապետարանը Կապալառուին տրամադրել է թույլտվություն և մուտքի իրավունք 2018 թվականի փետրվարի 12-ին՝ կմ 2+300-ից կմ 6+300 ճանապարհահատվածում: Հետագայում, 2018 թվականի հունիսի 8-ից սկսած Երևանի քաղաքապետարանը տրամադրել է մուտքի և տիրապետման իրավունք բոլոր տեղամասերի համար, իսկ կմ 0+ 020-ից կմ 0+110 տեղամասի համար մուտքի իրավունք է տրամադրել 2019թ. հունվարի 29-ից՝ ամբողջ ծրագրի երկայնքով: 2022 թ. օգոստոսի 15-ին շինարարին տրվել է մուտքի իրավունք Շերամ փողոցի 34 և 34/1 հասցեների երկայնքով՝ կմ 1+820-ից կմ 1+880 հատվածներում տեղակայված երկու հողամասերի համար:

6. 2020 թ. մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության պարետ պարոն Տիգրան Ավինյանի կողմից ընդունվել է որոշում, համաձայն որ 2020թ. մարտի 25-ից սկսած ՀՀ-ում բնակչության տեղաշարժի ու որոշ գործունեությունների մասով մտցվել են սահմանափակումներ ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով: Հետագայում սահմանափակումները երկարաձգվել են մինչև 2020 թվականի ապրիլի 10-ը, պատճառով շինարարական աշխատանքները դադարեցվել են: Շինարարական աշխատանքները վերսկսելու թույլտվությունը տրվել է 2020 թվականի ապրիլի 14-ից:

7. Պայմանագրի իրականացման ընթացքում վերոնշյալ խոչընդոտները լուծելու ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ միջոցները/քայլերը.

- Չնայած որ բոլոր անհրաժեշտ հանրային լուծումները տեղի են ունեցել և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի նախագծումը հաստատվել է Ճանապարհային ոստիկանության և փորձաքննության կողմից, Բ4 թաղամասի բնակիչները (գտնվում է Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի սկզբնամասի հարևանությամբ) Կապալառուին չեն թույլատրել իրականացնել շինարարական աշխատանքներ մոտ 500մ երկարությամբ տարածքում: Բ4 թաղամասի բնակիչների բարձրացրած խնդիրները լուծելու համար Երևանի քաղաքապետարանը պատվիրել է փոփոխություն կատարել Բ4 թաղամասի հարակից հանգույցում:

8. Վերոնշյալ պատճառներից ելնելով՝ Պայմանագրի ավարտի ժամկետը երկարաձգվել է երեք անգամ՝

- Առաջին երկարաձգում. ավարտի ժամկետը տեղափոխվել է 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:
- Երկրորդ երկարաձգում. ավարտի ժամկետը տեղափոխվել է 2020 թվականի հունիսի 30-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:
- Երրորդ երկարաձգում. ավարտի ժամկետը տեղափոխվել է 2021 թվականի հունվարի 31-ից մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:



**Պատկեր 1-3. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի տեղադիրքի քարտեզ, Մրցույթ 5**


9. Հաշվի առնելով շինարարական ընկերության սնանկությունը՝ Երևանի քաղաքապետարանը դադարեցրել է պայմանագիրը, որը կնքվել էր «Տիրոենա Սկավի» շինարարական ընկերության հետ (2023 թ. երկրորդ եռամսյակ), համապատասխան ծանուցում ուղարկելով Կապալառուին և առաջարկելով պայմանագրի փոխանցում նոր շինարարական ընկերությանը («Խաչհար» ՍՊԸ), որը հաստատվել էր որպես պայմանագրի ենթակապալառու:

10. ԱԶԲ-ի հետ խորհրդակցությունների արդյունքում որոշվել է Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի մնացած մասի շինարարությունը փոխանցել Լևանտինա Ինխեներիա Կոնստրուկսիոն Ս.Լ. ընկերությանը, քանի որ այս ընկերությունը Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (ՔԿԶՆԾ) շրջանակներում միակ գործող կապալառու էր և ուներ բավարար կարողություններ: Փոխանցման այս գործընթացը պաշտոնապես ձևակերպվել է 2023թ. երրորդ եռամսյակի հաշվետու ժամանակաշրջանում: Կապալառուի աշխատանքների մեկնարկի օրը սահմանվել է 2023 թ. օգոստոսի 29-ը, իսկ ավարտի օրը՝ 2023 թ. դեկտեմբերի 22-ը (չորրորդ եռամսյակ, 2023 թ.):

11. Մինչև 2023 թ. դեկտեմբերի վերջ, Մրցույթ 5-ի շրջանակներում շինարարական աշխատանքները (Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի մնացած հատվածի կառուցում) հիմնականում ավարտված էին:

12. Հաշվի առնելով, որ 1+820 - 1+980 կմ հատվածը (հատված Բ) հանվել է Կապալառու շինարարական աշխատանքների շրջանակից, համաձայն Ընդհանուր Պայմանագրի 3.3 ենթակետի կապալառուին հրահանգվել է իրականացնել որոշակի անվտանգային միջոցառումներ, որպեսզի այս հատվածը լինի հանրության համար անվտանգ, մինչև հետագայում կշարունակվեն շինարարական աշխատանքները: Ստորև ներկայացված

«Արմենիկումի հատված՝ տեսք վերևից» գծապատկերում ներկայացված են տրված հրահանգի շրջանակներում իրականացվելիք անվտանգության միջոցառումների սխեման, որը հաստատվել, ստորագրվել և կնքվել է Ճանապարհային ոստիկանության կողմից:



Պատկեր 1-4. Սխեմա «Արմենիկումի հատված՝ տեսք վերևից»

13. Սույն հաշվետու ժամանակաշրջանում՝ մինչև թերությունների ծանուցման ժամանակահատվածի ավարտը (2024թ. դեկտեմբերի վերջ), բոլոր հարցերը, որոնք վերաբերել են շրջակա միջավայրին, առողջությանն և անվտանգությանը վերահսկվել են:

14. Հարկ է նշել, որ Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի 1+820-ից կմ 1+980-ի կառուցումը (սեկտոր B) հնարավոր չի եղել իրականացնել Երևանի քաղաքապետարանից անկախ հանգամանքներում, քանի որ առկա է եղել դատական գործ, որի շրջանակներում դատարանի կողմից ընդունվել է հայցի կիրառման որոշում՝ արգելանք դնելով ք. Երևան, Գ. Շերամի 46/1 հասցեի անշարժ գույքի վրա: Այս ամենի արդյունքում 2023թ-ի մայիսի 8-ից որևէ գործողություն, այդ թվում՝ շինարարական աշխատանքներ, այդ հատվածում թույլատրված չի եղել իրականացնելու:


15. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի այս հատվածի կառուցումը նախատեսվում է իրականացնել 2025 հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում, որի շինարարական աշխատանքների գնահատված արժեքը կազմում է շուրջ 340 մլն ՀՀ դրամ: Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի վերը նշված դատական վեճի լուծման պարագայում տարածքի սեփականատիրոջը անհրաժեշտ կլինի տրամադրել փոխհատուցում:

## 2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

### 2.1. Ծրագրի Նկարագրություն

16. Հայաստանի կառավարությունը 2015 թվականի հոկտեմբերին ԱԶԲ-ից ստացել է վարկ՝ ՔԿԶՆԾ, Տրանշ 2-ի ֆինանսավորման համար: Ծրագրի գլխավոր նպատակն է ավարտին հասցնել Երևանի շրջանցիկ ճանապարհի բացակայող հանգույցները՝ Մրցույթ 3. Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված, Մրցույթ 4. Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված և Մրցույթ 5. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված:

17. Նշված երկու ճանապարհային ծրագրերը կօգնեն շեղել երթևեկությունը քաղաքի կենտրոնից (տես պատկեր 2-1):



Պատկեր 2-1: Տրանշ 2-ի տեղադիրքի քարտեզ

### 2.2. Ծրագրի Պայմանագրեր և Կառավարում

18. ԱԶԲ-ն իրականացնում է Ծրագրի պարբերական վերանայումներ, Ծրագրի ստուգումներ Ծրագրի ամբողջ ընթացքում ԱԲՀ 2009-ում սահմանված սկզբունքների ու պահանջներին համաձայն: ԱԶԲ-ը կաջակցի ԵԿՆ ԾԻԳ-ին կառավարելու բնապահպանական ազդեցություններն ու ռիսկերը՝ դրանով նպաստելով ներդրումների երկարաժամկետ կայունության խթանմանը:

19. ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի (ԲՄ) հիմնական առաջադրանքներն են իրականացնել ամբողջական բնապահպանական կառավարում՝ ապահովելով Ծրագրի իրականացման ամբողջական համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և ԱԶԲ ԱԲՀ-ին (2009): ԲՄ-ն հանդիսանում է կապող օղակ Էգիս Ինթերնեյշնլ ընկերության (Ծրագրի ինժեներ) անվտանգության թիմի, Երևանի քաղաքապետարանի, գործադիր մարմնի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ծրագրի ազդակիր անձանց և ԱԶԲ-ի միջև՝ ձևավորելով և պահպանելով ուղիղ հարաբերություններ պետական մարմինների հետ: Ինժեների օգնությամբ ԲՄ-ն կազմակերպում և անցկացնում է հանրային խորհրդատվություններ և այլ միջոցառումներ: ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանը կառավարում է շինարարական տեղամասերի բնապահպանական խնդիրներին առնչվող բոլոր գործողությունները, իսկ ԾԻԳ-ի հողերի օտարման և տարաբնակեցման մասնագետ Սիրաք Գյուլբուդադյանը համակարգում է վերաբնակեցման և սոցիալական բնագավառի բոլոր հարցերը:

20. Ինժեներ/ՎԻ ԷԳԻՍ ինթերնեյշնլ ընկերությունը իրականացնում է աշխատանքների վերահսկողությունը (ներառյալ՝ շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության վերահսկումը): Կապալառուի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը վերանայվում ու հաստատվում/մերժվում են ՏԻ կողմից: Ինժեների բնապահպանական կառավարման թիմը պատասխանատու է Տրանշ 2-ի փաստաթղթերի բնապահպանական գնահատման մշակման համար և պատասխանատու է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի (Մրցույթ 3) և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի (Մրցույթ 5) շինարարական աշխատանքների բնապահպանական, առողջության, անվտանգության, և սոցիալական հարցերի վերահսկողության համար: Ինժեների ու Կապալառուի բնապահպանական թիմերի միջև հաղորդակցումը ապահովվում է համատեղ հանդիպումների, պաշտոնական նամակագրության և էլեկտրոնային նամակների, հեռախոսազանգերի և անձնական կապի միջոցով: Շրջակա միջավայրի, առողջապահության ու անվտանգության հարցերի ազգային մասնագետ Էդիտա Վարդգեսյանը վերահսկում է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի (Տենդեր 3) և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի (Տենդեր 5) շինարարական աշխատանքները: Վերահսկող կազմակերպության սոցիալական հարցերի մասնագետ Տիգրան Գրիգորյանը պատասխանատու է սոցիալական բոլոր հարցերի համար: ԷԳԻՍ ինթերնեյշնլ ընկերության պայմանագիրն ավարտվել է 31.12.2024թ.

21. Միքայել Թևոսյանը՝ Լևանտինա Ինխեներիա Կոնստրուկսիոն Սի.Էլ. շինարարական ընկերության շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի մասնագետը, պատասխանատու է եղել ՏԲԿԴ-ի (տարածքային բնապահպանական կառավարման պլան) պատրաստման և իրականացման համար՝ համաձայն ՆԲԳ/ԲԿԴ պահանջների, ինչպես նաև Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի (Մրցույթ 3) և 2023թ. սեպտեմբերից սկսած Տենդեր 5-ի շինարարական աշխատանքների մոնիթորինգի համար: Կապալառուի ԲՄ-ն զեկուցել է ինժեների բնապահպանության առողջության և աշխատանքի անվտանգության (ԲԱԱԱ) մասնագետին, որից հետո ինժեները հաշվետվություն է ներկայացրել ԾԻԳ-ի ԲՄ-ին: Գևորգ Չոբանյանը պատասխանատու է եղել Մրցույթ 3 ծրագրի առողջապահության և աշխատանքի անվտանգության (ԱԱԱ) հարցերի համար, իսկ Գարիկ Իսախանյանը Մրցույթ 5-ում՝ սկսած

2023 թ. սեպտեմբերից: ԷԳԻՍ ինթերնեյշնլ ընկերության պայմանագիրն ավարտվել է 31.12.2024թ.

22. Միքայել Թևոսյանը՝ «Տիրրենա Սկավի Էս.Փի.Էյ» կապալառուի բնապահպանության մասնագետը (ԲՄ), պատասխանատու է եղել տեղամասի բնապահպանական կառավարման պլանի (ՏԲԿՊ) պատրաստման և իրականացման համար՝ համաձայն ՆԲԳ/ԲԿՊ պահանջների, ինչպես նաև Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի (Մրցույթ 5) շինարարական աշխատանքների մոնիթորինգի համար: Կապալառուի ԲՄ-ն զեկուցել է ինժեների առողջապահության և աշխատանքի անվտանգության (ԱԱԱ) մասնագետին, որից հետո ինժեները հաշվետվություն է ներկայացրել ԾԻԳ-ի ԲՄ-ին: Դանիել Եղիզարյանը պատասխանատու է եղել առողջապահության և աշխատանքի անվտանգության հարցերի համար, իսկ սոցիալական հարցերի բոլոր ասպեկտների համար շինարարության ընթացքում պատասխանատու է եղել Գագիկ Ավագյանը՝ սոցիալական հարցերի մասնագետը: Երևանի քաղաքապետարանը «Տիրրենա Սկավի Էս.Փի.Էյ» հետ պայմանագիրը խզել է 2023 թվականի մայիսի 29-ին՝ իմանալով, որ ընկերությունը ճանաչվել է սնանկ/անվճարունակ:

Աղյուսակ 2-1. Շրջակա միջավայրի անվտանգության աշխատակիցների կոնտակտային տվյալներ

Կազմակերպություն	Կարգավիճակ	Անձի անունը	Պաշտոն	Կոնտակտային տվյալներ
ԵԿՆ ԾԻԳ	ԾԻԳ	Քրիստինե Սահակյան	ԲՄ	<a href="mailto:kristine.sahakyan@yerevan.am">kristine.sahakyan@yerevan.am</a>
		Սիրաք Գյուլբուդաղյան	ՎՄ	<a href="mailto:sirak.gyulbudaghyan@yerevan.am">sirak.gyulbudaghyan@yerevan.am</a>
Էգիս	Վերահսկիչ ինժեներ	Էդիտա Վարդգեսյան	ԲԱԱԱ մասնագետ	<a href="mailto:editavard@gmail.com">editavard@gmail.com</a>
		Տիգրան Գրիգորյան	Սոցիալական հարցերի մասնագետ	<a href="mailto:tgrigoryan1980@gmail.com">tgrigoryan1980@gmail.com</a>
Լևանտինա Ինխեններիա Կոնստրուկսիոն Սի.Էլ.	S3 Կապալառու	Միքայել Թևոսյան	Բնապ. և սոց. հարցերի մասնագետ	<a href="mailto:mikaeltevosyan@gmail.com">mikaeltevosyan@gmail.com</a>
		Գևորգ Չոբանյան	ԱԱԱ	+37493214748
Տիրրենա Սկավի Էս.Փի.Էյ	S5 Կապալառու	Միքայել Թևոսյան	ԲՄ	<a href="mailto:mikaeltevosyan@gmail.com">mikaeltevosyan@gmail.com</a>
		Դանիել Եղիզարյան	ԱԱԱ	374 94400193
		Գագիկ Ավագյան	Բնապ. և սոց. հարցերի մասնագետ	+37498368488, e-mail: <a href="mailto:gagavagyan888@mail.ru">gagavagyan888@mail.ru</a>
Լևանտինա Ինխեններիա Կոնստրուկսիոն Սի.Էլ.	S5 Կապալառու 29.08.2023-ից	Միքայել Թևոսյան	ԲՄ	<a href="mailto:mikaeltevosyan@gmail.com">mikaeltevosyan@gmail.com</a>
		Գարիկ Իսախանյան	ԱԱԱ	
		Միքայել Թևոսյան	Սոցիալական հարցերի մասնագետ	<a href="mailto:mikaeltevosyan@gmail.com">mikaeltevosyan@gmail.com</a>

### 2.3. Ծրագրի գործունեությունը ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում

23. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված են:

24. Հաշվետու ժամանակահատվածում Մրցույթ 5-ի համար իրականացվել է հետշինարարական բնապահպանական աուդիտ, որի վերաբարեյալ ստուգաթերթը հաստատվել է ԱԶԲ-ի կողմից 2024թ. դեկտեմբերի 20-ին: Վերջինս ներկայացված է սույն հաշվետվությանը կից Հավելված 1-ում:

25. Տենդեր 4-ի համար Դավիթաշեն-Աշտարակ ճանապարհահատված կառուցումը ավարտվել է 2018 թվականին: 2021 թվականին ԱԶԲ-ն ներգրավեց անհատ խորհրդատու՝ Դավիթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի ողջ երկարությամբ աղմուկի հետազոտություն/մոդելավորում իրականացնելու համար: Հետազոտության արդյունքների հիման վրա ԱԶԲ-ն առաջարկեց կառուցել աղմկապաշտպան պատնեշներ՝ ԱԶԲ-ի անվտանգության պահանջներին համապատասխան: Նախագծային աշխատանքները իրականացվել են Էգիս Ինթերնեյշնլ ընկերության կողմից, որի հիման վրա մոտ 465 մետր երկարությամբ աղմկապաշտպան պատնեշների տեղադրման աշխատանքները սկսվել են 2024 թ. հունվարին Լևանտինա Ինխեներիա Կոնստրուկսիոն Ս.Լ. ընկերության կողմից և ավարտվել 2024 թ. մարտի 28-ին:

### 2.4. Ծրագրի նախագծի ցանկացած փոփոխության նկարագրություն

26. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված են:

### 2.5. Համաձայնեցված շինարարական մեթոդների ցանկացած փոփոխության նկարագրություն

27. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված են:

### 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՎԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված են:

29. Հաշվետու ժամանակահատվածում Մրցույթ 5-ի համար իրականացվել է հետշինարարական բնապահպանական աուդիտ, որի վերաբարյալ ստուգաթերթը հաստատվել է ԱԶԲ-ի կողմից 2024թ. դեկտեմբերի 20-ին: Վերջինս ներկայացված է սույն հաշվետվությանը կից Հավելված 1-ում:

#### 3.1. Դաշտային ստուգայցեր/աուդիտներ

30. Հաշվետու ժամանակահատվածում ԵԲ ԾԻԳ բնապահպանության մասնագետի կողմից 2024թ. հոկտեմբերի 8-ին իրականացվել է հետշինարարական բնապահպանական աուդիտ, որի վերաբարյալ ստուգաթերթը բերված է սույն հաշվետվության հավելված 1-ում:

#### 3.2. Խնդիրների վերահսկում (Անհամապատասխանության ծանուցումների հիման վրա)

31. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտվել են:

#### 3.3. Միտումներ

32. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

#### 3.4. Չնախատեսված բնապահպանական ազդեցություններ ու ռիսկեր

33. Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

## 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

34. Շրջակա միջավայրի մոնիթորինգի ծրագիրը, որը նպատակ ունի ապահովելու համապատասխանությունը ԱԶԲ-ի բնապահպանական պահանջներին և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ոորտում կիրառվող բոլոր օրենքներին, կանոնակարգերին և չափանիշներին, մշակվել է ՇՄԱԳ-ների և ՇՄԿՊ-ների շրջանակներում: ՆԲԳ/ՇՄԱԳ-ները և ՇՄԿՊ-ները ներառում են մոնիթորինգի այն գործողությունները, որոնք դիտարկվել են ծրագրի իրականացման ընթացքում՝ կառավարման ներքո նախագծման փուլում, նախապատրաստական, կառուցման, ինչպես նաև շահագործման և պահպանման ժամանակահատվածներում:

35. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

36. Նախորդ հաշվետու ժամանակահատվածում Մրցույթ 3-ի համար շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվել է հետշինարարական բնապահպանական աուդիտ՝ հայտնաբերելու բնապահպանական անհամապատասխանությունները, որոնք պետք է շտկվեն թերությունների ծանուցման շրջանում: Որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերվել:

37. Մրցույթ 5-ի համար հետշինարարական բնապահպանական աուդիտն անցկացվել է 2024թ. հոկտեմբերի 8-ին, որի վերաբերյալ ստուգաթերթը ներկայացված է սույն հաշվետվության հավելված 1-ում:

### 4.1. Ընթացիկ ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի ամփոփագիր

38. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

### 4.2. Միտումներ

39. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

### 4.3. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում

40. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

### 4.4. Նյութական ռեսուրսների օգտագործում

#### 4.4.1. Ընթացիկ ժամանակաշրջան

41. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

#### 4.4.2. Ռեսուրսների ընդհանուր օգտագործում

42. Հաշվետու ժամանակահատվածում ռեսուրսների օգտագործումը չի եղել, քանի որ ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել այն պատճառով, որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված են:

### 4.5. Թափոնների Կառավարում

43. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտվել են: Այս ճանապարհային հանգույցների հետագա շահագործումն ու սպասարկումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ներկայումս Մրցույթ 3-ի 1 կմ-ոց հատվածը հանձնման ընթացքում է, որի վերաբերյալ Երևանի քաղաքապետի համապատասխան կարգադրությունը՝ կատարված և ավարտված աշխատանքների շահագործման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին, արդեն ստորագրված է: Մրցույթ 3-ի մյուս հատվածը Երևանի քաղաքապետարանին է հանձնվել 02.05.2023թ.: Ինչ վերաբերում է մրցույթ 5-ի հանձնման գործընթացին, ապա այն սկսվել է, և Երևանի քաղաքապետի համապատասխան հրամանը գտնվում է քաղաքապետի կողմից ստորագրման փուլում: Այս գործընթացները նախատեսվում է ավարտել հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

#### 4.5.1. Ընթացիկ ժամանակաշրջան

44. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

#### 4.5.2. Կուտակված թափոնների արտադրություն

45. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

#### 4.6. Առողջապահություն և Անվտանգություն

##### 4.6.1. Հասարակության առողջություն և անվտանգություն

46. Հաշվի առնելով, որ Մրցույթ 5-ի կմ 1+820 - 1+980 հատվածը (Բ հատված) հանվել է շինարարական աշխատանքների շրջանակից, Կապալառուն իրականացրել է որոշակի միջոցառումներ՝ հանրության համար նշված հատվածը անվտանգ դարձնելու նպատակով՝ մինչև կասեցված աշխատանքները հետագայում կվերսկսվեն:

47. Հանրային անվտանգության որոշ միջոցառումներ այնուամենայնիվ լիարժեք չեն պահպանվում տեղի բնակիչների և վարորդների անփութության հետևանքով, քանի որ չնայած ճանապարհային նախագրչական նշանների առկայությանն առ այն, որ նշված հատվածներում երթևեկությունն արգելված է, որոշ վարորդներ շարունակում են երթևեկել այդ հատվածներով: Այս ճանապարհային հանգույցի հետագա շահագործումն ու սպասարկումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ինչ վերաբերում է մրցույթ 5-ի հանձնման գործընթացին, ապա այն սկսվել է, և Երևանի քաղաքապետի համապատասխան հրամանը գտնվում է քաղաքապետի կողմից ստորագրման փուլում: Այս գործընթացը նախատեսվում է ավարտել հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

48. Մրցույթ 5-ի համար սույն հաշվետու ժամանակահատվածում ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից իրականացվել է հետշինարարական բնապահպանական աուդիտ՝ հայտնաբերելու շտկման ենթակա բնապահպանական անհամապատասխանությունները, որոնք պետք է իրականացվեին թերությունների ծանուցման /պատասխանատվության ժամանակահատվածում: Վերջինիս վերաբերյալ հաշվետվությունը հաստատվել է ԱԶԲ կողմից, որը ներկայացված է սույն հաշվետվության հավելված 1-ում:

##### 4.6.2. Աշխատողների անվտանգություն և առողջություն

49. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

50. Հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Մրցույթ 3-ի և Մրցույթ 5-ի շրջանակներում բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են:

51. Ծրագրի ընթացքում բնապահպանական երաշխիքների ուղղությամբ իրականացված դասընթացները ներկայացված են ստորև՝ աղյուսակ 4-7-ում:



**Աղյուսակ 4-7. Տեղեր 5. Ծրագրի ընթացքում իրականացված Բնապահպանական երաշխիքների վերաբերյալ դասընթացներ**

Ամիս/ Տարի	2018	2019	2020	2021	2022	2023
Հունվար	Ո/Կ	07.01.2019թ. ԻՏԱ անձնակազմի, բանվորների և աշխույժների համար կազմակերպվել են ԲԱԱԱ, ռեսուրսների պլանավորման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ դասընթացներ: Ընդհանուր առմամբ հետևյալ թեմաներով վերապատրաստվել է 74 մարդ. - շին. աշխատանքների ընթացքում հնարավոր ԲԱԱ անվտանգության բացասական ազդեցությունները և դրանց մեղմացման միջոցառումները, - ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ռիսկեր, - Արտակարգ իրավիճակների (ԱԻ) արձագանքման պլան, - Աշխատանքային ռիսկեր, աշխատանքի անվտանգության չափորոշիչներ (հողային աշխատանքներ, վարորդների անվտանգություն, էքսկավատորների և բուլդոզերների շահագործման անվտանգություն), - Անհատական պաշտպանիչ միջոցների ճիշտ օգտագործում, - Շին. աշխատանքների բնապահպանական ազդեցությունները և դրանց կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումները, - հնագիտական գտածոների ընթացակարգեր:	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել
Փետրվար	Կապալառուի ԲՄ-ն 21.02.2018թ. անցկացրել է դաշտային վերապատրաստման դասընթաց առողջապահության և անվտանգության ապահովման միջոցառումների վերաբերյալ՝ Կապալառու և ենթակապալառուի անձնակազմի համար: Հատուկ ուշադրություն է դարձվել բողոքների լուծման մեխանիզմին), հանրային անվտանգությանը և տեղի բնակիչների բարձրացրած հարցերին, ինչպես օրինակ փոշու վերահսկումն է:	Կազմակերպվել են կանոնավոր դաշտային վերապատրաստման դասընթացներ աշխատակիցների համար, որոնք ներառել են տարբեր խմբերի աշխատողներին, այդ թվում՝ բարձրությունների վրա աշխատողներին և վարորդներին: Դասընթացների հիմնական թեմաներն են եղել՝ փոշու վերահսկման միջոցառումները, երթևեկության և վարորդական վերահսկման միջոցառումները և կանոնները, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական անվտանգության ռիսկերը, ինչպիսիք են փայտամածների տեղադրում և շահագործում, սանդուղքների օգտագործումը, աշխատանքը խրամուղիներում, անհատական պաշտպանիչ միջոցների կրում:	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել
Մարտ	02.03.2018թ. Կապալառուն անցկացրել է ԱԱ դասընթաց ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ՆԲԳ/ԲԿՊ պահանջների վերաբերյալ իր ԻՏԱ անձնակազմի ու բանվորների համար: Դասընթացին մասնակցել է 31 մարդ, որի վերաբերյալ հաշվետվությունը, ներառյալ՝ թեմաները և մասնակիցների ցանկը, կցվել է կապալառուի 2018թ. մարտի հաշվետվությանը:	Կազմակերպվել են մի շարք լրացուցիչ դասընթացներ տարբեր խմբերի աշխատողների և վարորդների համար: Կապալառուի վարորդները և աշխատակիցները տեղեկացվել են փոշու վերահսկման միջոցառումների, երթևեկության և խցանումների վերահսկման միջոցառումների ու կանոնների վերաբերյալ, ինչպես նաև ստացել են հրահանգներ շինաշխատանքների ընթացքում հիմնական անվտանգության ռիսկերի մասին, ինչպիսիք են փայտամածների տեղադրումն ու շահագործումը, սանդուղքների օգտագործումը, աշխատանքը խրամուղիներում, անհատական պաշտպանական միջոցների կրումը:	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Անվտանգության ուսուցում հատուկ աշխատատեղերում	-

Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2

Ապրիլ	Տեղամասում իրականացվել է ՎԻ-ի կողմից պահանջված լրացուցիչ ուսուցում՝ բարձրության և խորը փոսերում և խրամուղիներում աշխատողների անվտանգության վերաբերյալ:	Տեղամասում աշխատողների համար անցկացվել է ՎԻ-ի կողմից պահանջված լրացուցիչ դասընթաց անվտանգային հարցերի վերաբերյալ: Կապալառուի վարորդները և աշխատողները տեղեկացվել են ծածկերի օգտագործման, ինչպես նաև շին. աշխատանքների ընթացքում հիմնական անվտանգային ռիսկերի մասին, ինչպիսիք են փայտամածների տեղադրումն ու շահագործումը, սանդուղքների օգտագործումը, խրամուղիներում աշխատելը, ԱՊՄ կրումը: Ենթակապալառուների համար պարբերաբար պահանջված բնապահպանական վերապատրաստման դասընթացներ չեն իրականացվել:	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Բնապահպանական երաշխիքների ընդլայնված դասընթաց՝ կազմակերպված 25-27.04.2023 է CWOD-PSG-ի կողմից
Մայիս	11.05.2018թ. նոր կապալառու Կամուրջշին ՍՊԸ-ի աշխատակազմի, աշխեկների և բանվորների համար իրականացվել է համապարփակ ԲԱԱ վերապատրաստում ԱԶԲ անվտանգության երաշխիքների և ՆԲԳ/ԲԿՊ պահանջների վերաբերյալ: Վերապատրաստման շրջանակում ներառվել են հնարավոր բնապահպանական ու ԱԱ բացասական ազդեցությունները, դրանց մեղմացման միջոցառումները, ԱԻ պլանը, աշխատանքի անվտանգության չափանիշները և ԱՊՄ պահանջները, հնագիտական պատահական գտածոների մասով ընթացակարգեր: Բացի այդ, աշխատողների համար տեղում անցկացվել է լրացուցիչ անվտանգության դասընթաց՝ բարձրության վրա աշխատելու, շին. աշխատանքների ընթացքում հիմնական անվտանգության ռիսկերի վերաբերյալ, ինչպիսիք են փայտամածերի կառուցումն ու շահագործումը, սանդուղքների կիրառումը, խրամուղիներում աշխատելը, ԱՊՄ կրումը: Վարորդների համար է անցկացվել նաև բետոնե թափոնաջրերի կառավարման վերաբերյալ դասընթաց, որը պահանջվել էր ՎԻ կողմից:	Կապալառուն 2018 թ. մայիսի 8-ին և 10-ին անցկացրել է շրջակա միջավայրի/ատոդջապահության և անվտանգության դասընթաց ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ՆԲԳ/ԲԿՊ պահանջների վերաբերյալ նոր ընդունված ԻՏԱ, բանվորական անձնակազմի ու աշխեկների համար: Ընդհանուր առմամբ դասընթացին մասնակցել է 77 մարդ: Դասընթացի վերաբերյալ հաշվետվությունը, ներառյալ թեման և մասնակիցների ցանկը, կցված են կապալառուի 2019 թ. մայիս ամսվա հաշվետվությանը:	Դաշտային դասընթացներ՝ տարբեր խմբերի աշխատողների համար	ԲԱԱ դասընթացներ՝ տարբեր խմբերի աշխատողների համար, մայիսի 15-ին:	Դասընթաց չի իրականացվել	-

Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2

Հունիս	<p>15.06.2018թ. նոր ընդունված աշխատակազմի, աշխեկների և բանվորների համար իրականացվել է ԲԱԱ համապարփակ վերապատրաստում ԱԶԲ անվտանգության երաշխիքների և ՆԲԳ/ԲԿՊ պահանջների երաբերյալ: Վերապատրաստման շրջանակում ներառվել են հնարավոր ԲԱԱ բացասական ազդեցությունները, դրանց մեղմացման միջոցառումները, ԱԻ պլանը, աշխատանքային անվտանգության չափորոշիչները և ԱՊՍ պահանջները, ինչպես նաև հնագիտական գտածոների մասով ընթացակարգերը: Բացի այդ ՎԻ պահանջով տեղամասում բանվորների համար իրականացվել է լրացուցիչ վերապատրաստում՝ բարձրության վրա աշխատելու, շին. աշխատանքների ընթացքում անվտանգային հարցերի՝ փայտամածների կառուցում և շահագործում, սանդուղքների օգտագործում, խրամուղիներում աշխատել և ԱՊՍ կրել, ինչպես նաև վարորդների համար՝ բետոնաջրերի կառավարման մասին:</p>	<p>Տեղամասային աշխատանքին հատուկ դասընթացներ կազմակերպվել են տարբեր խմբերի աշխատողների (բարձրության վրա աշխատողներ) և վարորդների համար:</p>	Դասընթաց չի իրականացվել	Տեղամասային ԲԱԱ հարցերի համառոտ ակնարկ անձնակազմի համար	Դասընթաց չի իրականացվել	-
Հուլիս	<p>Կազմակերպվել են մի շարք լրացուցիչ դասընթացներ աշխատողների տարբեր խմբերի ու վարորդների համար (բետոնախառնիչ մեքենաների վարորդներ, կամուրջների վրա աշխատող բանվորներ և այլն): Վարորդներն ու բանվորները տեղեկացվել են բետոնի արտահոսքի և փոշու վերահսկման միջոցառումների, ինչպես նաև շին. աշխատանքների ընթացքում անվտանգության հիմնական ռիսկերի մասին, ինչպիսիք են փայտամածների կառուցումն ու շահագործումը, սանդուղքների օգտագործումը, խրամուղիներում աշխատելը և ԱՊՍ կրումը:</p>	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	-

Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2

Օգոստոս	<p>Վերահսկողի ԲՍԱԱ մասնագետի կողմից 30.08.2018թ. կազմակերպվել է առողջապահության և անվտանգության դասընթացը է տեղամասային բոլոր տեսուչների և ինժեներների համար, որին մասնակցել է 20 մարդ: Դասընթացի նյութերը մշակվել են PPT ձևաչափով և կենտրոնացած են եղել ՔԿՁՆԾ տեղամասերին բնորոշ հաճախակի անհամապատասխանությունների վրա: Հիմնական թեմաներն են եղել.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օդային զծեր և աշխատանքային տեղամասի պարսպապատում, արգելապատնեշներ</li> <li>- Նախազգուշական և ճանապարհային անվտանգության նշաններ</li> <li>- Արտահագուստ և ԱՊՄ</li> <li>- Հասարակական անվտանգության համար նախատեսված հետիոտնային միջանցքներ և պաստառներ</li> <li>- Պահեստավորման տարածքի կազմակերպում</li> <li>- Բարձրության վրա աշխատանքի անվտանգություն</li> <li>- Սանիտարական պայմաններ</li> </ul>	Դաշտային հատուկ դասընթացներ կազմակերպվել են տարբեր խմբերի աշխատողների (ենթակապալառու «City Group»-ի բարձրության վրա աշխատողներ) և վարորդների համար:	Դաշտային դասընթացներ տարբեր խմբերի աշխատողների համար, ինչպիսիք են վարորդները և բարձրության վրա աշխատողները	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	-
Սեպտեմբեր	Դասընթաց չի իրականացվել	2019 թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ առողջապահության և անվտանգության դասընթացը ծածկված բեռնատարների ծածակի օգտագործման և աշխատողների պարտականությունների վերաբերյալ: Մասնակիցների ցուցակը ներկայացված է 3-րդ շաբաթական հաշվետվությունում:	Դաշտային դասընթացներ աշխատողների տարբեր խմբերի համար, ինչպիսիք են վարորդները և բարձրության վրա աշխատողները	Դաշտային համառոտ դասընթաց ԲԱԱ անձնակազմի համար	Դասընթաց չի իրականացվել	ԲԱԱ դասընթացներ տեղում՝ աշխատողների տարբեր խմբերի համար, 22.09.2023 թ.
Հոկտեմբեր	ԱԶԲ անվտանգության քաղաքականության վերաբերյալ իրազեկման դասընթաց ԲԱԱ թեմայով՝ կապալառուի ԻՏԱ անձնակազմի համար իրականացվել է ինժեների ԲՍԱԱ մասնագետի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 3-ին:	Դասընթաց չի իրականացվել	Դաշտային դասընթացներ տարբեր խմբերի աշխատողների համար	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել

Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2

Նյութեր	<p>Իրագրված բարձրացման դասընթաց ԱԶԲ անվտանգության քաղաքականության վերաբերյալ՝ սոցիալական անվտանգության միջոցառումների մասին, իրականացվել է ԱԱԱ ինժեների կողմից 2018 թ. նոյեմբերի 3-ին՝ կապալառուի ինժեներական և անվտանգության անձնակազմի համար: Դասընթացի օրակարգըն է եղել.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ԱԶԲ անվտանգության քաղաքականության հայտարարգրի (SPS, 2009) ներկայացում</li> <li>2. ԾԻԳ-ի ինժեների և կապալառուի սոցիալական մասնագետների դերը և պարտականությունները: Կտիվ լումներ, ինտերակտիվ հաղորդակցություն, հոյզերի կառավարում:</li> <li>3. Ծրագրի բողոքների լուծման մեխանիզմ. հիմնական տարրեր, խնդրի վերլուծություն և բողոքի լուծման քայլեր, խնդրի լուծման մոտեցումներ:</li> <li>4. Գործնական ուսումնասիրություն</li> <li>5. Մոնիթորինգ և հաշվետվողականություն՝ համաձայն ԱԶԲ-ի նոր ձեռնարկի:</li> </ol>	Դասընթաց չի իրականացվել	Տեղամասային դասընթացներ՝ տարբեր խմբերի աշխատողների համար	Դաշտային բնապահպանական դասընթացներ տարբեր խմբերի աշխատողների համար	Աշխատանքին հատուկ անվտանգության դասընթաց	Դասընթաց չի իրականացվել
Դեկտեմբեր	Դասընթաց չի իրականացվել	ԲԱԱ դասընթաց, որը կազմակերպվել է կապալառուի կողմից կապալառուի և ենթակապալառուների անձնակազմի համար, անցկացվել է 2019 թվականի դեկտեմբերի 21-ին: Ընդհանուր առմամբ, 47 մարդ է մասնակցել դասընթացին: Դասընթացի վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը, ներառյալ օրակարգը, թեման, լուսանկարները և մասնակիցների ցանկը, կցված է կապալառուի 2019 թվականի դեկտեմբերի ամսական հաշվետվությանը:	-	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել	Դասընթաց չի իրականացվել

## 5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

